



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան
25 մարտի 2021թ.

ԲԴԽ-16-Ո-Կ-07

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՏԻԳՐԱՆ ՓՈԼԱԴՅԱՆԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Բարձրագույն դատական խորհուրդը, ծանոթանալով Արդարադատության նախարարի՝ «Սնանկության դատարանի դատավոր Տիգրան Փոլադյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ ՀՀ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2021 թվականի մարտի 4-ի N-14Ա որոշմանը և կից ներկայացված փաստաթղթերին,

Պ Ա Ր Ձ Ե Ց .

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը:

18.09.2020 թվականին «ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ, փաստաբան Արամ Օրբելյանի, ընկերության իրավաբանական վարչության ղեկավար Արթուր Մելիքյանի՝ Արդարադատության նախարարին ներկայացված հաղորդման հիման վրա, ուսումնասիրելով թիվ ԿԴ1/1293/02/17 քաղաքացիական գործով 20.09.2019 թվականին կայացված վճիռը (նախագահությամբ՝ դատավոր Գ. Մազմանյան), ինչպես նաև հաղորդմանը կից ներկայացված փաստաթղթերը և «www.datalex.am» դատական տեղեկատվական համակարգում տեղադրված՝ թիվ ԿԴ1/1293/02/17 քաղաքացիական գործով «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» 05.10.2017 թվականին կայացված որոշումը, նույն գործով 02.03.2018 թվականին կայացված վճիռը (նախագահությամբ՝ դատավոր Տ. Փոլադյան)՝ Արդարադատության նախարարը 11.01.2021 թվականին Սնանկության դատարանի դատավոր Տիգրան Փոլադյանի նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ:

Արդարադատության նախարարի 04.03.2021 թվականի N-14Ա որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդին՝ Սնանկության դատարանի դատավոր Տիգրան Փոլադյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունն ստանալու պահից եռամսյա ժամկետում:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի նախագահը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի նիստերը, ստորագրում է Բարձրագույն դատական խորհրդի որոշումները, ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդն այլ մարմինների հետ հարաբերություններում, ինչպես նաև իրականացնում է Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ լիազորություններ:

Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին 22.10.2020 թվականի թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշման հավելվածի 91-րդ կետի համաձայն՝ Խորհրդի նախագահը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթի բոլոր նյութերը ստանալու պահից մեկամսյա ժամկետում քննարկման համար նշանակում է խորհրդի նիստ: Միջնորդությունը և վարույթի նյութերը Խորհրդի անդամներին է ներկայացվում նիստից առնվազն 10 օր առաջ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասով, Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին 22.10.2020 թվականի թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշման հավելվածի 91-րդ կետով,

Ո Ր Ո Շ Ե Ց .

Արդարադատության նախարարի կողմից ներկայացված՝ Սնանկության դատարանի դատավոր Տիգրան Փոլադյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդության քննության կապակցությամբ Բարձրագույն դատական խորհրդի նիստը նշանակել 2021 թվականի ապրիլի 12-ին, ժամը 14³⁰-ին՝ Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում /ք. Երևան, Կորյունի 17/:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ